Տ. ԿՈՐԻՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Տ. Կորիւն եպիսկոպոս Բաղդասարեանը (աւազանի անունը Յովնան), ծնուել է 1980 թ. յունիսի 26-ին, Աշտարակի շրջանի Սասունիկ գիւղում։

Նախնական կրթութիւնն ստացել է գիւղի Գեւորգ Չաուշի անուան միջնակարգ դպրոցում եւ Աշտարակի Մխիթար Սեբաստացու անուան գիմնազիայում։

1995-ին ընդունուել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարան, ապա Ընծայարան։

2000-ի օգոստոսի 4-ին ձեռնադրուել է սարկաւագ։

2003-ի սեպտեմբերի 28-ին ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի։

2004–2009 թթ. սովորել է Երուսաղէմի Եբրայական համալսարանում՝ Մանկավարժութեան, սոցիոլոգիայի եւ հասարակական մարդաբանութեան բաժիններում։

2005-ին եղել է Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի քարտուղարը։

2008–2023 թթ. ընծայարանում դասաւանդել է Սոցիոլոգիա, Հայ Եկեղեցու եւ Երուսաղէմի պատմութիւն առարկաները։

2009-ին եղել է Սրբոց Յակոբեանց տպարանի տեսուչ։

2010-ի մայիսի 22-ին, ի ձեռաց օրուայ լուսարարապետ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի՝ ստացել է վարդապետական մասնաւոր չորս աստիճաններ։

2010—2013 թթ. ուսանել եւ գերազանցութեամբ աւարտել է Երուսաղէմի Եբրայական համալսարանի Կրթութեան կառավարում բաժնի մագիստրատուրան։

2012-ին եղել է Կալուածոց գրասենեակի փոխտեսուչ։

2013—2015 թթ. տարիներին ուսանել եւ գերազանցութեամբ աւարտել է Երուսաղէմի Եբրայական համալսարանի Միջազգային յարաբերութիւններ բաժնի մագիստրատուրան։

2014 թ.-ից մինչեւ օրս Միաբանական ընդհանուր ժողովում մի քանի անգամ ընտրուել է Տնօրէն ժողովի անդամ։

2014-ին ստացել է Ֆրանսիայի Արարատ Գիտութիւնների Միջազգային Ակադեմիայի պատուաւոր անդամի կոչում։

2015-ին տնօրէն ժողովում նշանակուել է Սուրբ Տեղեաց քարտուղար։

2016—2023 թթ. եղել է Սուրբ Աթոռի Դիւանապետ եւ Միջեկեղեցական յարաբերութիւնների վարիչ։

2018-ին նշանակուել է Եկեղեցիների համաշխարհային խորհուրդում Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան ներկայացուցիչ։

2019-ին նշանակուել է Պաղեստինի աստուածաշնչային ընկերութիւնում Երուսաղէմի Հայոց պատրիարքութեան ներկայացուցիչ։

2023 թ. յունուարի 13-ին նշանակուել է Սուրբ Աթոռի Կալուածոց տեսուչ։

2023 թ. մարտի 24-ին ստացել է Ծայրագոյն Վարդապետութեան 10 աստիճաններ, ձեռամբ՝ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի։

2023 թ. հոկտեմբերի 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ ձեռնադրուել է եպիսկոպոս։

Հեղինակ է երեք գրքի։